Անիավան

Վարչական ղեկավար՝ Մարտիրոս Միրոյան

Հեռ 093 40 18 76

Մակերես՝ 87կմ^2

Բնակչություն՝ 397

aniavan.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Անիավան
Համայնքի պատմական անվանումները- Անի կայարան
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1902թիվ
Որ համայնքներին է սահմանակից համայնքը – Բագրավան, Անիպեմզա
Հեռավորությունը մայրաքաղաքից- 100 կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից – 43 կմ
Բնակչության կազմը – Հայ
Կրթական հաստատություններ – դպրոց
Արտադրական ձեռնարկություններ - << Միրոյան Տուֆ>> ՍՊԸ, <<Կալմիտա>> ՍՊԸ
Բնակչության հիմնական զբաղմունքը – Անասնապահություն
Գյուղ Անիի նախկին տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 43կմ հեռավորության վրա: Հիմնադրվել է երկաթուղային կայարանին կից ավան՝ Երևան-Գյումրի երկաթուղու ճանապարհահատվածի հարևանությամբ:
Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից 1420մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ: Գյուղի շրջակայքում կան կարմիր և սև տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:
Գյուղի բնակչության զգալի մասը տեղափոխվել է Հայաստանի Անիի, Արթիկի, Թալինի շրջաններից: 1926 թ-ին ունեցել է 66, 1939 թ-ին՝ 249, 1959 թ-ին՝ 386, 1970 թ-ին՝ 460 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 397 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 32%, աշխատունակներ՝ 48%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 44 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Բնակչության մի մասը աշխատում է տեղի քարհանքում և երկաթուղային կայարանում:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 7 և 22 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, Անիավան/Անի կայարան/

Ինդեքս՝ 2903